ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКАЯ ОБЛАСТЬ
МЕРДЗАВАНСКИЙ МУНИЦИПАЛИТЕТ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի
մարզի Մերձավան համայնք.
Երևանյան խճուղի 2-րդ փողոց N1.
Հեռախոս (096) 11-00-44
էլ. փոստ merdzavan.armavir @ mta.gov.am

21.11.2016թ.

թիվ 240

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. Ս. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

ՀԱՐԳԱՐԺԱՆ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ ենք ներկայացնում 2016 թվականի նոյեմբերի 14-ին կայացած համայնքի նորընտիր ավագանու անդրանիկ նիստում <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի N65-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին>> N5-Ն որոշումը:

Առդիր 59/ հիսունինը/ թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 112.70/3093-16
22 11 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ
14 նոյեմբերի 2016 թվականի N5-Ն

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 65-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երկրորդ մասի 1-ին կետով, 56-րդ հոդվածի երկրորդ մասով, **ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավանի գյուղական համայնքի 2016 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N65-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 1 740 700 ՀՀ դրամն ուղղել հետևյալ հոդվածներին՝

ա. 740 700 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4212 հոդվածին.

բ. 1 000 000 ՀՀ դրամն ուղղել 10 բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի 4729 հոդվածին.

2) համայնքի վարչական բյուջեում ավելացնել եկամուտ՝ ինքնակամ կառույցի օրինականացման վճար 217 400 ՀՀ դրամ և այն ուղղել 01 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4261 հոդվածին.

3) նախատեսված և հաստատված հոդվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

ա. 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4239 հոդվածով նախատեսված գումարից 300 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4237 հոդվածին .

բ. 09 բաժնի 1-ին խմբի 1-ին դասի 4239 հոդվածով նախատեսված գումարից 500 000 ՀՀ դրամն ուղղել 01 բաժնի 6-րդ խմբի 1-ին դասի 4269 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (9) Դեմ (0) Ձեռնպահ (0)

ԱՎԵՏԻՔ ՏՈՆՈՅԱՆ

ԱՐՏԱԿ ԵՍԱՅԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՇԱՄԲԱՐՅԱՆ

ՊԱՅՔԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՊԱՊԻՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** ԼԵՎՈՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ